տարի նոյեմբերի 21-ին թիւ 1160 իւր յայտարարութեան հետ ուղարկում է Սինոդին նոյն քահանայի իսկական աղերսագիրը, որը մատուցել է ինքն քահանան տեղւոյն Գեր. Թեմական Առաջնորդին, իրեն կարգալոյծ անելու շնորհ խնդրելով, որովհետև այդ աղերսագրի մէջ ինքն քահանայն յառաջ բերելով իւր ամենամեծատառ և նեղսակիր վիճակը, մանաւանդ իւր ընտանեկան վիշտ ու հոգսը իբրև անարժան ոմն ծանր է համարում մնալ իրեն քահանայութեան լծի տակ։ Սրանից յետ տեղւոյն Առաջնորդ Գեր. Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատեանց Մարտի 11-ին թ. 76 ուղարկելով Սինոդին նոյն քահանայի մի այլ մեղայական աղերսագիրը, յայտնում է որ, ինչպէս վկայում են գիւղացիքը և տեղւոյն գործակալը յիշեալ քահանայն հեռացել է իւր վատ ընթացքից և ուխտել է սրբութեամբ պահել իւր քահանայական կոչումը, վաստորոյ և խնդրում է ներել նորա յանցանքը թեթևացնելով իւր պատիժը։ Սրբազան Սինոդը յարգելով Գեր. Առաջնորդի, միջնորդութիւնն և գործակալի ու տեղւոյն ժողովրդի քահանայի մասին արած վկայութիւնը, որ նա ուխտել է այսուհետև պարկեշտ և համեստ վարքով մնալ, պատուիրում է Գեր. Առաջնորդին թոյլ տալ քահանայագործութիւն անելու, և պարկեշտութեամբ հովուել իւր ժողովուրդը։

ՈՒՍՈՒՄՆ. ՎԱՐՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յանձնաժողովս լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի Պ. Ղ. Աղայեանցի խնդրի վերայ ամսիս 24-ին թ. 47 արած մակագրութիւնը այս բովանդակութեամբ. «Յանձնեմք ուսումնարանական Վարչական Յանձնաժողովոյն կարգադրել զարժանն վասն գործածութեան ի սմին նշանակեալ դասագրոց յամենայն ուսումնարանս Հայոց»։ Պ. Ղ. Աղայեանցի խնդրի բովանդակութիւնը այս է. Թեմական վերատեսուչները Ս. Էջմիածնի Ուսումն. Վարչական Յանձնաժողովի հրամանով շրջաբերական են ուղարկել իրանց թեմերում գտնուած ուսումնարաններին, որ իւր՝ խնդրատուի «Ուսումն մայրենի լեզուի» երեք դասագրքերը գործա-

ծութիւնից հանուին, որ և կատարուել է։ Իսկ այդպիսի կարգադրութիւն նա գտնում է անարդար և անվաւեր նախ նորա համար, որ յիշեալ դասագրքերը հանգուցեալ Կաթողիկոսի հաստատած ցուցակումն են գտնուում, ուրեմն այդ ցուցակից հանելու համար պէտք էր կամ Կաթողիկոսի կամ նորա Տեղակալի նախընթաց հաճութիւնը, որ չէ ստացել Յանձնաժողովը, երկրորդ՝ որ այդ որոշումն արել են Յանձնաժողովի երկու անդամներ ի բացակայութեան «Հայերենագէտ» անդամի։ Այդքի առաջ ունենալով այս բոլորը, խնդրատուն կարծում է, որ ուղղագրութեան խնդիրը մի պատրուակ է եղել, իսկ «այդքի ընկնողը աւելի անձնական թշնամութիւնն է» ըստ որում եթէ կարգադրութեան նպատակը լինէր ուղղագրութիւն մտցնել մեր դպրոցների մէջ, իւր «դասագրքերը մէջ տեղից հանելուց յետոյ էլ միւս դասագրքերի ուղղագրութիւնը մնում է զանազան»։ Խնդրատուն ի միջի այլոց ասում է, նաև, որ թէպէտև Յանձնաժողովի շրջաբերականում իւր անունը տրուած չէ, բայց «Թիֆլիսի թեմի վերատեսչի շրջաբերականում առանձնապէս շեշտուած է իւր անուան և ազգանուան վերայ, որպէս զի վարժապետները պարզ ի պարզոյ իմանան թէ յատկապէս ո՞ւմ դասագրքերը չը-պիտի ընդունուին, և երբ ինքն այդ մասին բացատրութիւն է խնդրել նոյն թեմ. վերատեսչից վերջինս պատասխանել է, թէպէտ շրջաբերականում Ձեր անունը գրուած չէ, բայց Մանդինեան և Նահապետեան բերանացի պատուիրեցին ինձ, որ Ձեր անունը մտցնեմ իմ շրջաբերականում»։

Այս խնդիրը լսելիս Յանձնաժողովիս մէջ կարգացուեց նախկին վարչութիւնից 1871 թուին Յուլիսի 16-ին թեմերի առաջնորդներին ուղղած շրջաբերականի պատճէնը, ուր ի միջի այլոց ասուած է. «Ե. Պարտաւորեցուցանել դաւագ ուսուցիչս և դաւագ ուսուցչուհիս, զի ի զանազան բաժանմունս ինքեանց յանձն եղեալ ուսումնարանաց պահպանեսցեն զմիակերպութիւն ուղղագրութեան լեզուի։ Զ. Խստիւ արգելուլ զգործածութիւն այնոցիկ դասագրեանց, որք տպագրեալք են նորահնար ուղղագրութեամբք, նոյնպէս և զգուշանալ յազդեցութենէ նոյն օրինակ ուղղագրու-

թեամբ պագրեալ գրենոց և պարբերական հրատարակութեանց։

Վերոգրեալը լսելուց յետոյ Ցանձնաժողովիս անդամների կողմից արծարծուեցան յետագայ խնդիրներն. Արդեօք նորահնար ուղղագրութիւն ասելով՝ Ցանձնաժողովը պարտաւոր չէ՞ր պարզել, թէ յատկապէս որ տեսակն ի նկատի ունի, քանի որ մեզանում կան տարբեր ուղղագրութիւններ, մեր աշխարհիկ լեզուի դեռ նոր և դեռ աճող հատակի շնորհիւ։ Նախ քան այդպիսի մի կարգադրութիւն անելը անհրաժեշտ չէ՞ր հոգևոր ծայրագոյն իշխանութեան դիմել ձեռնհաս անձինքներից մի մասնաժողով կազմելու, որ իրաւասութիւն ունենար քննելու այդ տարբեր ուղղագրութիւնները և նրանցից ընտրելագոյնը պարտաւորեցուցիչ հրատարակել գոնէ դպրոցական դասագրքերի և գրադարանների համար։ Ի՞նչն էր ստիպում Ցանձնաժողովի նախկին երկու անդամներին շրջաբերականի մէջ չյիշել Ղ. Աղայեանցի անունը, իսկ բերանացի յանձնել Թիֆլիսի թեմի ծխ.-եկեղ. դպրոցների վերատեսչին նորա դասագրքերը հանել գործածութիւնից. Արդեօք ո՞ր ատոիճանի իրաւասու էին այդ կարգադրութիւնն անողներն, առանց նախընթաց գիտութեան Հոգ. Իշխանութեան մի անդամ արդէն ցուցակ մուծուած դասագրքերի գործածութիւնը արգելելում։

Այս հարցերի նկատմամբ Ս. Նախագահը նկատեց, որ այժմ մենք կոչուած ենք ի նիստ գործադրելու Ս. Տեղակալի հրամանը և դորանով էլ պէտք է ամփոփուի այս խնդիրը։

Ցանձնաժողովը որոշեց՝

Համաձայն Ամենապատիւ Տ. Տեղակալի հրամանի շրջաբերականով յայտնել Գերապատիւ թեմական Առաջնորդներին և թեմ. վերատեսուչներին, որ Ղ. Աղայեանցի «Ուսումն մայրենի լեզուի» երեք դասագրքերը ըստ առաջնոյն գործածութեան մէջ համարելի են քանի որ գտնուում են ընդհանուր դասագրքերի հաստատուած ցուցակում։

Այն նիստում որոշուեց նաև՝

Ա. Շրջաբերականով պահանջել թեմական առաջնորդներից վիճակագրական տեղեկութիւններ իրանց թեմերի ծխ-եկեղ. ու-

սումնարանների մասին 18⁹¹/₉₂ թուականի համար համաձայն կանոնագրութեան 21 յօդուածի։

Բ. Սարբ Էջմիածնի Ս. Աթոռը մակագրութեամբ Յունիս 17 1892 թ. № 1773 առաջարկել է Յանձնաժողովիս անօրէնութեան Ջաւասա Մէլիք-Մելքումեանցի խնդիրը, Կովկասեան ուսումնար. շրջանի Հոգաբարձուից նրան արուած ուսուցչութեան վկայականի հետ, որով վերոյիշեալ Մէլիք-Մելքումեանը խնդրում է տալ նորան ուսուցչութեան իրաւունք Հայոց երկու սեռի ծխ.-ական. ուսումնարաններում։ Վերոյիշեալ Մելիք-Մելքումեանն ընդունուեց Հայոց ծխ.-ական. ուսումնարաններում իրաւունք ունեցող անձանց ցանկի մէջ և. կարգում, որի մասին պէտք է տալ տեղեկութիւն թեմական վերատեսուչներին։

Այս արձանագրութեան պատճէնը հրատարակել «Արարատ» ամսագրում։

ՈՒՍՈՒՄՆ. ՎԱՐՉԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ.

1. Յովհաննէս Խաչուումեանց ըստ նախընթաց հաճութեան Ամեն. Տ. Տեղակալի գրկումէ Հոգևոր Տեսչութեան ներքոյ ուսուցչութեան պաշտօն վարելու իրաւունքից։

2. Ընդունել են համաձայն իրանց խնդրանաց և վկայականների Ծխական. եկեղ. դպրոցների ուսուցիչների ցանկում ա. Վաղարշակ Գասպարեանց — բ. կարգի. Միքայէլ Սաֆարեանց, Ռուբէն Յովհաննէսեանց և Գաւիթ Նօնեանց — գ. կարգի. օր. Եղիսաբեթ Գալստեանց — դ. կարգի. օր. Աշխէն Յովհաննիսեանց և տիկին Գայիանէ Լունկևիչ ԺԱ. կարգի։

3. Ուսուցչութեան իրաւունք ստանալու մասին Յանձնաժողովը մոտած և քննուած խնդիրներից մերժուել են.

ա. Տիկ. Աշխէն Միանս. Արիստակէսեանցինը,

բ. Երուանդ Պալեանցինը,

գ. Մելքոն Ալիբէգեանցինը,

դ. Ոթոն Տէր Պետրոսեանցինը,

ե. Մկրտիչ Վարդապետեանցինը։